




Կ. ԴԱՐՅԱՆ

ԶՅՈՒՆԱՊԱՏ ԼԵՌՆԵՐՈՒՄ



ՊԵՏՀՐԱՏ • 1936

36-4
C21130

10 NOV 2011

ՀԱՅԷ ՊՐՈԼԵՏ-ՏՈՒՐԻԶՄԻ ՅԵՎ ԵՔՍԿՈՒՐՄԻՈՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

910.4
Դ-27

Վ. ԴԱՐՅԱՆ

ԶՅՈՒՆԱՊԱՏ ԼԵՌՆԵՐՈՒՄ

Ալպինիոսի որագրից

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՊԵՏԱԿԱՆ

ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ 1936

Պատ. խմբագիր Ո. Սեմիրյան
Տեխ. խմբ. Տ. Խաչվանյան
Արագգրիչ Ա. Արզումանյան

* *

Պետհրատի տպարան
Քլավկինա Վ.—334, Պատվեր 328,
Հրատ. 3561, Տիրաժ 1000

* *

ԴԵՊԻ ԱՐԱԳԱՆԻ ԳԱԳԱԹԸ

I

Արևը սկսում էր թեքվել դեպի մայրամուտ:
Փչում էր զով քամին և զգում էյինք լեռների
շունչը:

Վաղուց արդեն Յերևանը մնացել էր մեր լեռե-
վում: Աշտարակից դեպի Ոհանավանք տանող խճուղին
բարձրանում է վոլորապտուկա զառիվաչքով, վոլոր
նեղ է ու քարքարոտ: Յերբ բարձրանում ենք
դարավանդը, բացվում է ընդարձակ հորիզոնը: Հեռ-
վում կտրում են մեր տեսածիլը յերկու իրար հան-
դիպակաց լեռներ, դրանք Արայի և Շամիրամի լեռ-
ներն են: Հուշ են դարձել հիմա այդ անունները:
Փոխվել է հիմա աշխարհը:

«Դու անցնում ես ու տեսնում քաղաքները հիմա
այն,



1886 87

Վորտեղ խոտ եր բուսնում, յերբ դեռ ապրում եր
Արան,

Այլ և աշխարհը հիմա, այլ և հիմա նայիրին
Վոչ մի արքա ել չկա, վոր չտրվի քո հրին»:

Յե. Չարեցց

Այժմ կոլտնտեսական գյուղն և բազմել այդ լեռ-
ների ստորոտին և կոլտնտեսական հանդերն են վեր-
ված նրա շուրջը:

Ուրիշ մարդիկ: Տարբեր հույզեր: Նոր կյանք:

II

Բաշ—Ապարանի խճուղին լիքն եր հանդից վերա-
դարձող կոլտնտեսուհիներով, վորոնք մեզ դիմավո-
րում եյին ուրախ ժպիտով: Մեր ծղոտե լայնեղր
գլխարկները որորվում եյին քամու ուժեղ հոսանքից:
Հեռվում, ամպերի տակից գլուխը դուրս եր ցցել
Արագածի հյուսիսային, ամենաբարձր գագաթը:

Ուն սկսում եր նոսրանալ և զգացվում եր Արա-
գածից փչող ցրտաշունչ զեփյուռի շոյանքը: Բաշ—Ա-
պարանում մեզ շրջապատել եյին կոլտնտեսական-
ները, չերիտասարդությունը: Բոլորն արդեն գիտե-
լին պրոլետարական տուրիզմի Արագածի աստղաձև
արշավի մասին:

Տեղի ընկերները պատրաստել եյին մեզ համար
գիշերելու տեղ:

III

Ոգոստոսի 18-ն եր: Պայծառ առավոտ: Բաշ—Ապա-
րանի կոլտնտեսական շուկան սկսում եր աշխուժա-
նալ: Շրջակա գյուղերից, սարերից, յայլաղներից
իջնում եյին գյուղացիները բեռներով և մթերքնե-
րով:

Գործկոմի շենքի մոտ հավաքվել եյին կոլտնե-
սականները, շրջանի պատասխանատու աշխատողները,
չերիտասարդությունը: Այստեղ եր նաև բոլորի կող-
մից սիրված քյուրդ Համեն—Գործադիր Կոմիտեյի
նախագահի տեղակալը, վորը 12 տարի անընդհատ
իր պոստումն ե:

Մենք ուրախ տրամադրությամբ բարձեցինք ձի-
երը: Առավոտյան ժամի 11-ն եր. հավաքված ըն-
կերներն ուրախ բացականչություններով ուղեկցե-
ցին մեզ մինչև գյուղի ծայրը:

IV

Մենք անցնում եյինք Զոջ ձորով: Արագածի
հյուսիսային գագաթը ծածկվել եր մեր դիմաց ընկած
լեռների յիտուում:

Զիերը դժվարությամբ եյին հաղթահարում վե-
րելքը: Մեր շնչառությունը դժվարանում եր և մենք
ակամայից դանդաղեցնում եյինք մեր քայլերը և
շուտ-շուտ հանգիստ տալիս ձիերին:

Գեղեցիկ և Արագածի հյուսիսային լանջը:

Յերեկոյան մթնշաղին մեր յերթը կանգ առավ



Տուրխատները բարձրանում են Զոջ ձոր

Տանազիրմազ գյուղի նախկին ավերակ յայլաղում, Զինգիլ լեռան փեշերին, սառնորակ աղբյուրի մոտ, հանգած հրաբուխի բեկորների և չինգիլ քարակույտերի լաբիրինթի լեզրին:

Իսկ դիմացը բացվում էր չերփներանգ ծաղիկներ և դալար կանաչի մի գեղեցիկ պանորամա, վորը ձրգվում էր շատ հեռու և վերջանում Մխսանայի լեռնաշղթայի մոտերքում, տարածվելով կանաչավետ հովտում:

Յերեկո եր. ճանապարհը շարունակել՝ այլևս անհնարին էր: Մեզ մոտ լեղած վրանը հարմարեցրինք ավերակ յայլաղի տնակներից մեկի վրա և մնացինք գիշերելու այդտեղ:

Սկսվեց հորդ անձրևը, վորն ամբողջ գիշերը չկըտըրվեց:

Ահռելի յե գիշերն Արագածի ձորերում: Սե ու մուլթ ամպերը, բարձրաբերձ լեռները, առավկների և ջրվեժների աղմուկը սարսափ են ներշնչում անսովոր մարդուն: Ուժեղ անձրևի, աղմուկի, ամպերի և ամպրոպի վորոտին միախառնվում էյին մեր լերգերի բարձր ուրախ ձայները, վորոնք այդ ամայի վայրում ստեղծում էյին մի գեղեցիկ սիմֆոնիա: Բնութչան այդ ահռելի տարերքը, վոչնչով չեր կարող ընկճել մեր կամքը և տոկունութունը՝ հաղթահարելու բոլոր դժվարությունները, նվաճելու Արագածի հյուսիսային ամենաբարձր գագաթը, ամենադժվար մարշրուտով:

▼

Վաղ առավոտյան, թեթև նախաճաշից հետո, մեր յերթը շարժվեց առաջ: Մենք քայլում էյինք ծաղիկների միջով, յերփներանգ դալար գորգերի վրայով վորոնք պատած էյին վաղորդյան շաղով և գիշերվա հորդ անձրևի հետքերով:

Մենք անցնում ելինք Չինգիլ լեռան մոտով, 3437 մետր բարձրունքի լանջերով: Այստեղ, այս գեղատեսիլ լեռնային հովտում, կարկաչուն առվակների կամ առանձնակի ցցված քարակույտների ու փոքրիկ ժայռերի գեղեցիկ պանորաման լրացնում են լեռկուփոքրիկ լճակներ—անդորր, ժպտուն:


Քարտեզի վրա նրանք անուններ չունեն: Նրանցից մեկը, վորն ավելի մեծ է, տեղացիներն անվանում են «Ղարա գյոլ» (Սեվ լիճ): Իհարկե, այդ անվանումը ճիշտ է:

—Անվանակոչենք, — բացականչում է ընկերներից մեկը:

— Անվանենք պրոլետ տուրիզմի անունով՝ «ՈՊՏԵ» — հաստատում է մեր տուրիստական արշավի ղեկավարը: Այդ լիճը մենք այդպես ել կոչեցինք:

Ուշ յերեկոյան մենք հյուսիսային գագաթի ստորոտումն ելինք: Այն ժամանակ, յերբ մենք անցանք Լեսսինգ լճի մոտով և հսկայական դժվարություններով իջանք Ղազնաֆարի լայնարձակ կանաչավետ հովիտը, լեռկու Փրանսիացի տուրիստներ, իրենց թարգմանիչի հետ, չկարողացան հաղթահարել հյուսիսային մարշրուտի դժվարությունները և վերադարձան Ղազնաֆար: Տուրիստական մեր արշավախմբից մնացել եր 8 հոգի:

Յերեկոյան մթնշաղին մեր վրանը լսեցինք Ղազնաֆարի ձորում՝ հյուսիսային հաղթական գագաթի փեշերին ընկած փոքրիկ տափարակի վրա, սպիտակ ալիքներով գահավիժվող նրբակերտ ջրվեժի մոտ:



Սրագածի հյուսիսային գագաթն Ապարանի կողմից

VI

Ոգոստոսի 20-ի առավոտյան սկսվեց մեր վերելքը դեպի հյուսիսային գագաթը:

Ողն ավելի չեղ նոսրացել և մեր շնչառությունն ավելի դժվարացել:

Պրոլետարական տուրիզմի կազմակերպած առաջին արշավախումբն եր սա, ամենադժվարին մարշրուտով դեպի հյուսիսային ամենաբարձր գագաթը (4096 մետր բարձրությամբ):

Առաջին անգամ այդ բարձրության վրա պետք է ծածանվեր կարմիր դրոշակը: Մարշրուտի դժվարու-

թյունն, անընդհատ վերելքը և վայրելքը պահանջում էր տոկոսնուծթյուն, կամքի ուժ և դժմացկունություն: Մենք քայլում էինք ալպյան բուսականությամբ առատ լեռնալանջով՝ կարմիր կակաչ, մանիշակ, ձնծաղիկ և այլ գույնզգույն ու բազմահազար, յերվներանդ ծաղիկների բուրմունքը շնչելով:

Լեռնագագաթից մեր առաջ բացվում էր մի գեղեցիկ պանորամա, ուր փռվել էին դաշտերն ու գլուղները, Արարատյան լայնարձակ դաշտավայրը: Իսկ մի քանի տասնյակ կիլոմետր հեռավորության վրա հաղթականորեն վեր է՝ խոյացել սրածայր Մասիսը:

Առավակների ծով, լճերի հովիտ և Արագածը, հարուստ հանքային տեսակներով, պատմական հուշարձաններով, գեղեցիկ տեսարաններով:

VII

Հեռվում յերևում էին Ամբերդի՝ հին ամրոցի ավերակները, իսկ մեր դիմաց բացվում էր անդնդախոր ձորը:

Մենք մագլցում էինք խաբն ի վեր: Ալպյան գավազանները և պարանն ոգնում էին մեզ՝ չգլորվելու ձորը: Յեվ մենք ամուր կառչած պարանին, դանդաղ քայլերով առաջ էինք ընթանում:

Ոգոստոսի 20-ին, ցերեկվա ժամի 12-ին, մենք արդեն հյուսիսային գագաթի վրա էինք: Բոլորիս տրամադրությունը բարձր էր, ուրախ:

Մենք հաղթահարել էինք վերելքի բոլոր դժվարությունները:

Արագածի ամենաբարձր գագաթին ծածանվեց վարմիր դրոշակը: Բոլորս յերգում էինք «Ինտերնացիոնալը» և մեր ձայնի յեղևեջները, ուրախ բացականչությունները սողոսկում էին թարմ ողը, անցնում հեռով—հեռով ձորերը և կորչում անհայտության մեջ:

Վայրելքը մի քանի անգամ ավելի դժվար էր, քան վերելքը:

Մենք իջնում էինք պարանի ոգնությամբ, իսկ մեր առաջ և ձախ կողմում ընկած ձորերն արձագանքում էին մեր վոսքերի տակից գլորվող քարերի և ավազի զահավեժ աղմուկին:

Յերեկոյ յեր արդեն, յերբ մենք ուղևորվեցինք դեպի հարավ—արևմտյան լանջը՝ դեպի ողերևութաբանական կայանը, վերտեղ պետք է հանդիպեյինք աստղածև արշավի մասնակիցների մյուս խմբին, վերոնք նախորդ ուր բարձրացել էին Արագածի արևելյան գագաթը:

Մենք անցնում էինք յերեք ջրվեժների սահանքների ուղղությամբ, մերթ բարձրանալով, մերթ իջնելով: Լուսնկա գիշեր էր, փշում էր զով քամին: Մենք լուռ, հոգնած և համաքայլ վերջին պտույտը կատարեցինք և քարքարոտ գագաթավայրով իջանք դեպի ողերևութաբանական կայանը:

Հեռվում յերևում էր մի փոքրիկ տնակ, վորտեղից

նշմարվում եր մի աղոտ լույս, իսկ նրա կողքին հա-
զիվ տեսանելի սև լիճը:

Մեր ընկերները դիմավորեցին մեզ ուրախ բա-
ցականչուկությամբ և յերեկոյան խավարի մեջ
սկսվեց խանդավառ միտինգը:

VIII

Ողերևութաբանական կայանից մեր ուղին ընկ-
նում եր դեպի Արթիկ:

Մենք անցնում էինք պատմական խոշոր հուշար-
ձանների և վայրերի մոտով:

Գեղեցիկ է Մանթաշի ձորը: Այս գեղատեսիլ,
հոյակապ ձորով հոսում է Կարկաչյուն կոչված գե-
տակը:

Մեր առաջ աստիճանաբար բացվում է կանաչա-
դարված դաշտը, բարեբեր, բարգավաճ հողերով:
Ծաղիկների բազմազանությունը, աղբյուրների առա-
տությունը, քաղցր ու զով ոգը գրավում է բոլորին:
դեպի Արագածի լանջերը, Մանթաշի հովիտը:

Արագածի աստղաձև արշավին մասնակցող բոլոր
խմբերը մեծ խանդավառությամբ և վոգեվորությամբ,
հաղթահարելով լեռնային տուրիզմի բոլոր դժվարու-
թյունները, ոգոստոսի 21-ին վերադարձան Յերևան:

1934 թ., ոգոստոսի 22:

ՀԱԴԻՍԻ ԲԱՐՁՐՈՒՆՔՆԵՐՈՒՄ

Արեվի ճառագայթները սկսել էյին թեքվել դեպի
մայրամուտ, յերբ տուրիստական մի փոքրիկ խում-
բակ դուրս յեկավ Յերևանից դեպի Հադիս լեռը:

Յերեկոյան ժամը 6-ն եր:

Հեռվում՝ Քանաքեռի բարձրավանդակից դեպի
հյուսիս յերևում է լաչնանիստ Հադիս սարը, վորը
պատմության մեջ հայտնի յե վորպես Շամիրամի
լեռ, իսկ նրա դիմաց, դեպի արևմուտք յերևում է
Արալի լեռը:

Շյլարի մոտ, խճուղուց դեպ աջ, կուտնտեսական
արտերի միջով անցնում է գյուղական սալի ճանա-
պարհը, վորը տանում է դեպի Յերվոյան գյուղը:

Սա Հադիսի ստորոտում գտնվող վերջին գյուղն է,
վորտեղից տուրիստը պետք է գնա դեպի Քյանքյան
գյուղը, վորը գտնվում է սարի հակառակ ստորոտին
քնկած տափարակի վրա:

Յեղովանից դեպի Քյանքյան 8 ժամվա ճանապարհ է:

Պետք է բարձրանալ մի փոքրիկ բլրակ, նրա վրայով Գյուլիկիսա գյուղի ուղղութիւնով՝ բարձրունքների վրայից իջնել դեպի Քյանքյան տանող ձորակը, վորտեղ շատ հետաքրքիր արձագանքում է մարդկային ձայնը յեւ իջնել այդ ձորակի մեջ ընկած ճանապարհով դեպի գյուղը:

Անցնելով այդ ճանապարհը, տուրիստական խումբը չեղեկոյան ժամը 9-ին հասավ Քյանքյան գյուղը:

Տուրիստական խմբի բարձրաձայն յերգի ու նվագի ձայները մեծ թվով կոլտնտեսականներ հավաքեցին գյուղխորհրդի դռանը:

Յեկան կոլտնտեսուհիները, հանդից նոր վերագործած բրդագոյները, ուսուցիչները, կոմյերիստականները: Զեբմ ու հարազատ միջոցառում սկսվեց ինքնագործունեյութան չեղեկո—յերգ, նվագ, պարեր և շուրջպարեր: Այնուհետև կոլտնտեսականների միջոցով ծանոթացանք կոլտնտեսութան չեւ գյուղական այլ աշխատանքների հետ:

Մյուս ուրը վաղ առավոտյան սկսվեց վերելքը դեպի Հադիսի գագաթը:

Լեռնալանջերի վրա գեռ կան ձյան չհալված շերտեր: Ողբ սառն է: Փչում է բարակ քամի:

—Պետք է փորձել ձյունապատ լանջերով անցնել,— ասում է ընկերներից մեկը:

Չորս հոգի փորձ են անում բարձրանալ 40—50 աստիճան թեքություն ունեցող լանջերի վրայով, վորտեղ գեղեցիկ լեզվակներ կազմելով վայր են իջնում ձյան բարակ շերտեր:

Վերելքը դեպի գագաթը դժվար է և տևում է 2 ժամ:

Հադիսը լայնահաս է: Մեծ գագաթը շրջապատված է հնագույն պարիսպով, վորի ավերակներն են միայն մնացել: Փոքր գագաթը, վորն ընկնում է դեպի հյուսիս—արևելք, ծածկված է կտնաչով յեւ հաճելի տավրություն է թողնում, մինչդեռ մեծ գագաթը քարքարոտ է, վորի կենտրոնում կանգնած է յեռանկյունածև, բավական անհրապույր քարակույտը:

Հադիսը 2541—մետր ծովի մակերևույթից բարձր է և Հայաստանի ամենահետաքրքիր գագաթներից մեկն է:

Ամեն տարի խոշոր թվով տուրիստներ են բարձրանում Հադիսը: Նրա շրջակայքը, լանջերը չեւ գագաթը գրավիչ է իր ալպյան բուսականութեամբ յեւ գույնգոյն ծաղիկներով, պատմական հնագույն հուշարձաններով, իսկ ներքևում գեղեցիկ կանաչավետ հովտում գետեր է կազմում Կրբխ—Բուլաղը (40 աղբյուր):

Այստեղ բացվում է մի մեծ և գեղեցիկ պանորամ լեռան բոլոր կողմերում: Արևելքում՝ Աղմաղանի լեռ-

ները, արեւմտյան կողմում՝ Արաբաժի չորս գաղաթ-
ները, խառնարանը, Ղազնաֆարի ձորը, իսկ դեպի
աջ՝ Զինգիլ լեռները:

Հարավում բացվում է Արաբատյան լայնածավալ
գաշտը: Ներքեում՝ սարի ստորին՝ գեղեցիկ այգիների
մեջ Բաշ—գյուղն է, շրջապատված դալար բար-
դիներով:

Բաղմաթիվ ուղղութիւններով ճյուղավորվում է
Կըրխ—Բուլաղը:

—Վոչ միայն քառասուն, այլ ութսուն աղբյուր
կա այստեղ,—ասում է մի թուրք կոլտնտեսական:

Վաղուց է, վոր Յերեւանը վայելում է այդ աղ-
բյուրների սառնորակ յեւ առողջարար ջուրը:

Լեռան արեւելյան մասում յերկար ժապավենով
ձգվում են Աղմաղանի լեռները ճյուղապատ բաղ-
մաթիվ գաղաթներով, վորոնց միջից դեպի վեր են
խոյանում իրենց սպիտակ գլուխներով յեւ սրածայր
գաղաթներով Ուշթափա, Սպիտակ, Կարմիր յեւ Սև
լեռները:

Դեպի գաղաթը բարձրանում են ձյան սպիտակ լեղ-
վակները վորոնք մեջ ընդ մեջ սեւ (արդեն հալ-
ված) գոտիների մեջ գեղեցիկ տեսք են ընդունում:

Այդ լեռների մեջ է ընկած Կանլի գյուղը: Հարա-
վում բացվում է Արաբատյան ընդարձակ գաշտը:

Հեռվում մշուշի մեջ թաքցրել է իր գլուխը Մա-
սիսը: Յերեւան է Քանաքեռը, ապա Յերեւանը:

Այսպես է Հադիսը մայիս ամսում: Իսկ ներքեում,
մեր վտանների տակ, գյուղն է շրջապատված դալար

բարդիներով՝ այգիների մեջ: Բաղմաթիվ ուղղութիւն-
ներով ճյուղավորվում է Կըրխ—Բուլաղը:

Այստեղ է Կըղըլ—Բուլաղը, Կաթնաղբյուրը, Սար-
դար—Բուլաղը:

«Այստեղ է ապրել ամեն ամառ Յերեւանի Սար-
դարը: Այստեղ է յեղել նրա ապարանքը, իսկ Սար-
դար—Բուլաղ կոչված աղբյուրում, Սարդարը լողաց-
նելիս է յեղել իր կանանց: Դա պարսկական տիրա-
պետութիւն ժամանակն էր»—այսպես ելին պատ-
մում տեղացիները:

Իջնում ենք Բաշ—գյուղը: Սքանչելի բնութիւնը,
սառնորակ աղբյուրները, կոլտնտեսականների ու-
րախ հանդիպումը, ստիպում են մոռանալ հոգնա-
ծութիւնը: Այստեղից ճանապարհը դեպի Յերեւան
40 կիլոմետր է:

2 ժամ հանգստանալուց հետո խումբը ուղևոր-
վեց դեպի Յերեւան:

Ուղին դեպի Յերեւան ընկնում է Արամուս, Առինջ
Քանաքեռ գյուղերի միջով:

Ճանապարհը հեռաքրքիր է և չի հոգնեցնում:

1935 թ., մայիսի 12



ԳԵՊԻ ՄԱՅՄՆԵՒ ԳԱԳԱԹԸ

Գիշերվա ժամը հորան եր:

Սպասում ելինք լուսը բացվելուն:

Գնացքը վաղուց մեկնել եր դեպի Թիֆլիս, թողնելով մեզ Կիրովական կայարանում: Մեր սուրբատական խումբը բաղկացած եր 20 հոգուց:

Նախորդ ուր չերեկոյան դուրս ելինք չեկել Յերևանից այն հաշվով, վոր ոգտագործենք հանգստի ուրը, բարձրանանք Մայմեխի գագաթը, ծծենք լեռնային մաքուր ոգը, հանգստանանք սոճիների, սաղարթախիտ ծառերի ստվերներում չեվ մյուս ուրը վերադառնանք Յերևան: Լեռնային մի շարք արշավներ մեզ զարձրել ելին բավականաչափ դիմացկուն չեվ տուկուն, ամբողջ գիշերը գնացքում մեր խմբից և վոչ մեկը չեր քնել, իսկ լուսադեմին բոլորն ել գվարթեցին ու կայտառ:

Գիշերային լուսաստղն արդեն հանգչում եր, բացվում եր գվարթ լեռնային առավոտը: Լեռնալանջերի չեվ շրջակա բլուրների կատարներին մշուշը սկսում եր ցրվել դանդաղ, յերկար ձգվելով դեպի վեր, դեպի Մայմեխի գագաթը, դեպի մենավոր ծառը:

Լույսը բացվում եր:

* *

Յերկաթուղու կայարանում նախաձաշելուց հետո մենք բարձրացանք դիմացի այգին չեվ մտանք քաղաք:

Կիրովական (նախկին Ղարաքիլիսան): Անցյալում մի փոքրիկ գավառական քաղաք, կեղտոտ ու անբարեկարգ փողոցներով, նեղ, քարքարոտ, ցեխապատ նրբանցքներով: Այժմ նա Հայաստանի յերրորդ սոցիալիստական քաղաքն ե, վորը զարգանում ե բուռն թափով: Բարձր ե նրա կուրորտային նշանակությունը: Նա Հայաստանի լավագույն լեռնա—կլիմայական կայանն ե, ծովի մակերևույթից 1324 մետր բարձր:

Կայարանի մոտ, կանաչադարձ մի հսկայական մասսիվ միացնում ե քաղաքն արդյունաբերական և բանվորական նոր ավանի հետ, վորի կողքին բարձրանում են քիմիական կոմբինատի գործարանային կորպուսները:

— Տուրիստական լեռնային սրածալք ձեռնափայտերը, լայնեզր գլխարկները և մեր անսովոր տեսքը գրավում ելինք անց ու դարձ անողներին:

Տուրիստներ են, Մայմեխ պիտի բարձրանան,— բում ելինք մեր հետևից: Յեղանակը հետգհետե փոխվում եր: Յերկինքը մռայլվում եր, կուտակվում ելին

ամպերը Մայմեխի գլխին: Այդ նշանակում էր, վոր կարող եր անձրև գալ:

— Անպայման յեղանակը կփոխվի՝ ցեխ կլինի, և վերելքը սոսկալի կդժվարանա, հարկավոր է սպասել կամ վերադառնալ,— դժգոհում էլին վոմանք:

— Թեկուղ կարկուտ տեղա, պետք է բարձրանալ: Պետք է մարդվել, սովորել հաղթահարելու դժվարությունները, — վորոշեց խումբը և առաջ շարժվեց:

— Տուրիստը պետք է ամբապնդվի սոցիալիստական հայրենիքի պաշտպանության համար:

* *

Կիրովականի ֆիզիկոսներնիկ Արտուշը, ուրախ ժպտը դեմքին, ուղեկցում էր մեզ դեպի Մայմեխի գագաթը: Առավոտյան ժամի 7-ին մենք Վալանց ձորումն էին: Անցանք անտառա-փորձնական կայանը, ձորի փոքրիկ գետակը: Ճանապարհն ընկնում էր ըսպիտակ վրանների միջով, վորտեղ տեղավորված է ՊԱՋԸ Ավիաքիմի արտադորայինների ճամբարը: Ճամբարի մյուս ծայրից սկսվում է անտառը, վորտեղից մի փոքրիկ լեռնային վտարի ճանապարհ տանում է դեպի յայլաղները, դեպի Մայմեխի գագաթը:

Մենք անցնում ենք անտառի միջով, սաղարթալիս ծառերի ստվերներով պատած՝ բարձրունքի մի փոքրիկ արահետով: Աջ կողմում ընկած է Վանանց, իսկ ձախ կողմում՝ Վարդանուլչի ձորը:

Ահա և մեծ ու փոքր բոլոր կոշվող քարերը:

Մրանք հսկայական մեծության քարեր են, վորոնց տեղացիներն անվանում են բոլոր քար:

Ճանապարհի աջ կողմում ծածկված ծառերի, թփերի և կանաչների մեջ գետնին ամուր մեխված և դեպի ձորը խոնարհված կանգնած է մեծ բոլոր քարը, վորը հաղթականորեն յերևում է Վանանց ձորից բարձրանալիս:

Ներքևում, քարերի միջով, փոքրիկ սահանքներ կազմելով հոսում է լեռնային արագահոս գետակը:

* *

Ալթուն դադ:


Մայմեխի փեշերին, կանաչ մարգագետինների մեջ, ալպյան բուսականութամբ աչս գեղեցիկ տափարակի վրա, գետնին են մեխվել մի քանի հողաշեն, գետնափոր տնակներ: Սա լեռնային ամառանոց է — Կիրովականի յայլաղներն են: Այստեղ են հավաքված իրենց անասուններով 25 տնտեսութուն: Յերկրի համար նրանք պատրաստում են պանիր և յուղ:

Տուրիստների յերևալը մեծ ուրախություն պատճառեց աշխատավոր կանանց: Նրանք մեկ-մեկ դուրս էին գալիս տնակներից և ուրախ, ժպտադեմ դիմավորում մեզ: Նստեցինք հանգստանալու և վայելելու նրանց հյուրասիրած մաքուր կաթն ու մածունը:

* *

Մեծ հաճույքով և բարձրանում տուրիստը Մայմեխի գագաթը, կանաչ ծաղիկների և մշտադալար մարգագետինների միջով:

Յերեկվա ժամի մեկին Մայմեսի գաղաթին ե-
յինք: Լաջնարձակ գաղաթը ծածկված է քարակույ-
տերով և փոքրիկ քարե պարսպով: Այլ և ձախ կող-
մում ձգվում է Փամբակի լեռնաշղթան, իսկ մեր
վտաների տակ նրա գաղաթներից մեկը՝ լաջնանիստ
Մայմեսին է:



Տուրխտանները հանգստանում են Ալթուն դաղում

Մայմեսը գտնվում է ծովի մակերևույթից 3015
մետր բարձրությամբ վրա:

Դեպի հարավ-արևելք ընկնում է Փամբակի լեռ-
ների ամենաբարձր գաղաթը, Թեժ-Ահմեդը, վորը ծո-
վի մակերևույթից 3116 մետր բարձր է:



Տուրխտանները Մայմեսի գաղաթին

Հեռվում յերևում են Բիմկոմբինատի առաջին և
յերկրորդ մասերը, ոճապտույտ յերկաթուղապիծը,
կայարանը և ծաղիկների ու ծառերի մեջ թաղված
գեղեցիկ Կիրովականը: Հեռվում յերևում է մենավոր
ծառը, վորը միշտ մենակ է, լերկ է վողորկ բարձ-
րունքի վրա: Ողբ զով է, փչում է մեղմ, բարակ
քամի և հոգնածությունը չի զգացվում:

Հորիզոնը մնում է հեռու, շատ հեռու, վորը կոր-
չում է ամպերի մեջ: Իսկ զիմացը, լեռների վրայով
անցնում է դեպի Ջորաղես տանող մի նեղ արա-
հետ:

Արեւելքից — արեւմուտք ձգվում է Դիլիջան տանող
խճուղին, ոճապտուշտ, խիտ անտառների փեշերով,
տեղ-տեղ անհետանալով և ապա հայտնվելով անտա-
ռի մյուս ծայրին: Շրջակա լեռների դազաթները մը-
ռայլ են, ամպամած, մառախուղի մեջ, իսկ Մայմեխը
կանգնած է նրանց դիմաց արևի պայծառ ճառա-
գայթներով լուսավորված:

Արևն սկսում է թեքվել դեպի մայրամուտ: Տու-
րխտական խումբը թողնում է իր չեսեռում Մայմեխը
և ուրախ չերգերով իջնում ձորի ճանապարհով:
Շտապում ենք դեպի կայարան:

1934 թ., սեպտեմբեր 10

ՀԱՎԵՐԺԱԿԱՆ ՁՅՈՒՆՆԵՐԻ ՄԵՋ

1. ԿՈՎԿԱՍԻ ՁՅՈՒՆԱՊԱՏ ՀԱԿԱՆ

Յեվրոպայի ամենաբարձր կետի ելրրուսի լեռնա-
ջին առաջին արշավը 1935 թվին մեծ հետաքրքրու-
թյուն չեւ Վոգեվորություն առաջ բերեց, առանձնա-
պես տուրիստ չերիտասարգության շրջանում: 22 ալ-
պինիստների արշավը դեպի ելրրուսի ձյունապատ գա-
գաթն անցավ հաջող:

Անցյալում մեզ մոտ գալիս ելին հեռավոր յեվրոպական
չերկրներից, հետազոտելու մեր լեռնային բարձրունք-
ները, հիանալու մեր հովիտների գեղեցկությամբ: Այժմ
մեր չերիտասարգությունը և աշխատավորությունը մեծ
հոսանքով ձգտում են դեպի Կովկասյան լեռնաշղթայի
ձյունապատ գագաթները: «Ձի կարելի ապրել Կովկասում
չեւ չբարձրանալ ելրրուսի գագաթը» — ասում է ՊՈՒՏՁԵ-
ՐԵՐԸ: Լեռնային տուրիզմն անշուտ, տուրիզմի ամենա-

հետաքրքիր ձևերից մեկն է, առանձնապես հետաքրքր-
բերությունը դեպի Կովկասի ձյունապատ հսկա Ել-
բրուսը տարեց-տարի ավելի ու ավելի մեծանում է։
Ելբրուսը կամ Մինդի-Տաուն (5633 մ.) Յեվրոպայի
ամենաբարձր կետն է հանդիսանում (Մոնբլանը՝
4800 մ. Կադմեկը 5097 մ. չեվ այլն)։

Առաջին անգամ Ելբրուս է բարձրացել Կաբար-
դինցի Կիլլարը՝ 1829 թ.։ 1868 թվականին արևելյան
գագաթն են բարձրացել անգլիացիներ Ֆրեշֆիլդը,
Տուկկերը յեվ Մուլը, Դեվուասի ուղեկցութամբ։
1890 թվականին արևմտյան գագաթը բարձրացավ
ռազմական տոպոգրաֆ Պասուխովը։ Մինչև Հոկտեմ-
բերյան հեղափոխություն Ելբրուս են այցելել ըն-
դամենը մոտ 20 մանր խմբեր։ Քաղաքացիական պատե-
րազմը վերջանալուց հետո դեպի Ելբրուս սկսվեց պրո-
լետարական յերիտասարդության հոսանքը։ Սկսվեցին
մասսայական վերելքներ։ 1926 թվականին բարձրա-
ցան 19 վրացի տուրիստներ, ընկ. Նիկոլ Ա. ՉեՅի գըլ-
խավորութամբ։ 1931 թվականին բարձրացան Ելբրու-
սի գագաթն Անդրկովկասյան հետևակ դպրոցի 17 կուր-
սանտներ, ընկ. Կլեմեն ՅՅՅեՎի գլխավորութամբ։ 1931
թվականի ընթացքում Ելբրուս են բարձրացել ընդամե-
նը 90 մարդ, իսկ 1932 թ. 29 մարդ։ Միմիայն 1933 թվա-
կանին ձեռնարկվեց առաջին մասսայական վերելքը,
յերբ միաժամանակ բարձրացան 87 հոգի։

Յերրորդ մասսայական վերելքը, կատարվեց 1935
թվին։ Առաջինը՝ դա ՊՏԵԸ-ի Միութենական Կենտ.

Խորհրդի ակտիսիադան էր, 170 հոգուց բաղկացած
յերկրորդը՝ Կարարդինո-Բալկարական կուսնտեսական
ակտիսիադան, բաղկացած 618 հոգուց, վորն անցավ
շատ հաջող։ Վերելքը սովորաբար սկսվում է հարավից-
Բաքանա գետի հովտից։ Ի նկատի ունենալով, վոր մեծ
բարձրունքները չպետք է միանգամից վերցնել, այդ
պատճառով վերելքը կատարվում կանգառներով, ակ-
լիմաշիզացիայի յենթարկվելու համար (ոգի նոսրացմա-
նը սովորելու համար)։ Այդ նպատակի համար Պրոլետա-
րական Տուրիզմի չեվ Եքսկուրսիաների ընկերու-
թյունը կառուցել է բաղաներ յեվ ոթկաններ, «Տե-
մենկիլ»-ի բաղան (1780 մետր Մ. Մ. Բ.), «Կուզգադո-
Ելբուսա» բաղան (3100 մ. Մ. Մ. Բ.), ՊՏԵԸ-ի ոթկանը
(4200 մ. Մ. Մ. Բ.), ժայռերի վրա կառուցված «11-ի
ոթկան»-ը և Սեպուվինայի վրա մի անակ (4320 մ.
Մ. Մ. Բ.)

Առանձին տեխնիկական դժվարությունների բա-
ցակալության պատճառով, վերելքը դեպի Ելբրուս
համեմատաբար աչնքան էլ բարդ չէ չեվ մատչելի յե
տուրիստական խմբերի համար, սակայն պետք է
հիշել, վոր հսկայական բարձրությունը չեվ ուժեղ
ցուրտը մեծ պահանջներ են առաջադրում յուրաքան-
չյուր տուրիստին։ Ելբրուսը դեռ ևս քիչ է հետա-
զոտված և ներկայացնում է բավական հետաքրքիր
ընազավառ պրոլետարական տուրիստների հետազո-
տական աշխատանքների համար։

Ելբրուս բարձրարալու համար ամենատարածված

մարշրոտը հետևյալն է. տուրիստները Նալչիկից ավտոբուսով գնում են մինչև Տեգենեկլի և ապա խճուղով (մոտ 9 կիլոմետր) մինչև Տերսկոլա: Տերսկոլայից արահետով պետք է գնալ Ալատ հովտի միջով մինչև Կրուգազոր (2200-2300 մ.) 2-ից 2 և կես ժամ տևողությամբ. յերկրորդը՝ Կրուգազորից մինչև Տասնբևեկի ոթեան (4200 մ.) անցումը տևում է 5-7 ժամ: Յերրորդը՝ Տասնբևեկի ոթեանից դեպի Պասուխովի ոթեանը և Սեդլովիցան (5300 մ.) վորտեղից արդեն սկսվում է վերելքը դեպի գագաթները:

1935 թվին, առաջին անգամ պատմության մեջ Ելբրուսի գագաթին հեռախոս դրվեց: Այժմ ալպինիստները չեն շեղվի իսկական ճանապարհից:

Հեռախոսի սյուները ցույց են տալիս ուղին դեպի գագաթը: Հեռախոսի զանգը կանչում է անհրաժեշտ ոգնությունը: Ելբրուսի գագաթին հեռախոս դնելու միտքը պատկանում է կուսակցություն Կաբարդինո — Բալկարիայի մարզկոմի քարտուղար Բետալ Կալմիկովին:

Խնդիրն այնքան էլ հեշտ չէր, բայց շուտափույթ կերպով լուծվեց: Մարդիկ աշխատում էին հերոսաբար: Բուքի, ձյան, մառախուղի և սառնամանիքի պայմաններում մանուշյորների բրիգադը մի քանի անգամ բարձրանում էր գագաթը, հաճախ իր կյանքի գնով: Այնտեղ, վորտեղ հնարավոր չէր գրաստով փոխադրել սյուները՝ կառուցող հերոսներն իրենց

ուսերի վրա ելին կրում և առանց կանգ առնելու տանում ավելի բարձ ու բարձր:

Կրուգազոր տուրիստական բազայից մինչև Պասուխովի ոթեանը սյուները փորված են սառույցի մեջ, ձյունադաշտերում: Այնտեղ, վորտեղ ձյունը հալվում է, հեռախոսալարերը միացվում են սառույցներին:

Պասուխովի ոթեանից բարձր՝ մինչև Սեդլովիցան սառույցը ծակել են գալլիկոնով և սյուները թաղել սառույցի մեջ: Այդ ծանր աշխատանքում հսկայական ոգնություն են ցույց տվել Կաբարդինայի կոլանտեսականները:

Ելբրուսի ստորոտից մինչև գագաթը նրանք անցել են 168 կիլոմետր ճանապարհ, կանգնեցրել են մինչև 2000 սյուն, կառուցել են 110 կիլոմետր գիծ, կախել են 280 կիլոմետր հեռախոսալար, սարքավորել յերկու հեռախոսային կայան, մեկը Բախսնի կիրճում, իսկ մյուսը Ելբրուսի ստորոտին: 15 հեռախոսներ միացրել են գագաթի շուրջը ցրված ալպինիստական ճամբարները:

Հուլիսի 21-ին, նրանք Կալմիկովի հետ բարձրացել են Ելբրուսի արևելյան գագաթը: Այնտեղից, 5596 մետր բարձրունքից Բետալ Կալմիկովը հեռախոսով վողջույն է ուղարկել համաշխարհային պրոլետարիատի ղեկավար մեծ Ստալինին:

Լեռնային տուրիզմը միշտ պահանջում է փոխադարձ ոգնություն, ընկերով կյանքի պահպանություն և պատասխանատվություն, վորին կարելի է կոր-

ժանել սեփական անդրուշտությամբ: Միատեղ մի պարանոյլ բարձրանալը, կյանքը մեկ վրանի մեջ ըստեղծում են կուռ ընկերություն, մարդիկ սովորում են կոլեկտիվ կյանքի: Հայաստանի մի շարք շրջաններեց հավաքված 22 ենտուղիաստները համակված եյին այդ կոլեկտիվ զգացումով, հագեցված հազարավոր կոլտնտեսականների յեւլ բանվորների կամքով ու ցանկությամբ՝ հաղթահարելու լեռնային հիվանդությունն Նլբրուսի վրա, սառցադաշտերն ու սառցաժայռերը, բուքն ու մառախուղը: Նրանք 22 խանդավառ ալպինիստները ձգտում եյին այդ արշավով հավերժացնել Հայաստանի խորհրդայնացման 15-ամյակը:

ԿԱՅԱՐԴԻՆՈՒ — ԲԱՆԿԱՐԻԱՅՈՒՄ

Ալպինիստների խումբը հասավ Նալչիկ սեպտեմբերի 11-ին: Յերբեք մեր հիշողության միջեց չի ջնջվի այդ գեղեցիկ ցերկիրը, մեր հանդիպումը Կաբարդինո—Բալկարիայի ալպինիստների, ընկ. Ռադիոնովի յեւլ ԽՍՀՄ-ի ալպինիզմի վարպետ ընկ. Բարխաշի հետ. Ընկ. Բարխաշը մեզ ընդունեց հետևյալ խոսքերով.

— Յեթե ձեզ հաջողվի սեպտեմբեր ամսին բարձրանալ Նլբրուսի արևելյան գագաթը (5596 մետր), ապա այդ կլինի Հայաստանի ալպինիստների համար պատվի գործ:

Այժմ՝ այդ պատմական արշավից հետո մենք կազոդ ենք պատասխանել.




Կաբարդինո—Բալկարիայում

«Մենք բարձրացանք արևմտյան ամենաբարձր
գաղաթը (5633 մետր), ուր հասավ մեր խմբի
կեսը...»

Սեպտեմբերի 13-ին մենք թողեցինք սքանչելի
Նալչիկը:

Գեղեցիկ է Բաքսանի կիրճը: Նեղ խճուղով, վո-
րի չերկուռ կողմից բարձրանում են սրածայր ժայռերը
յեվ կախվում խճուղու վրա, ճանապարհը գնում է
դեպի Տեղենեկլի (154 կիլոմետր յերկարությամբ):
Բնությունն առատորեն պարգևել է իր գեղեցիկու-
թյունը մեր մեծ յերկրի այս ծայրամասին: Կիրճի
յերկարությամբ ձգվում է Բաքսանա դետակը, վորն
աղմկում է յեվ փրփուրի հսկայական սարեր ե ուղար-
կում դեպի ափերը: Իսկ նրա շուրջը տարածվում է
կանաչ մարգագետինը, Կարարդինո-Բալկարիայի մի
քանի առւններ նոր շենքերով: Հետզհետե կիրճը
դառնում է ավելի յեվ ավելի գեղեցիկ ու հետաքը-
րիր: Բարձրանում են սրածայր ժայռերն ու սեպածե
բարձր լեռները. վերևում կապույտ յերկինքն է, իսկ
ներքևում փրփրահույզ Բաքսանը, վորը յերբեմն մեր
ձախ կողմում է լինում, յերբեմն ել՝ աջ:

Ազատվելով վերջին, ամենանեղ Ելժուրտուկի
լեռնանցքից, ճանապարհը դուրս է գալիս դեպի լայն
հովիտը, վորտեղ կանաչ մագաղետինների մեջ ըն-
կած է Վերին Բաքսանը, Բալկարիայի ամենախոշոր
գյուղերից մեկը: Մեր դիմացը փայլում է Դոնդուզ—
Ուռուհ—Բաբի լեռնային հսկան վողորված արևի ճա-
ռագալթներով: Վերին Բաքսանից, կիրճի յեվ մի




Բաքսանայի կիրճը

շարք Բալկարական առւնների, գեղեցիկ անտառով
շրջապատված հովիտի՝ և ձյունապատ դաղաթների մի-
ջով ճանապարհը տանում է դեպի Տեղենեկլի առւը:
Այստեղ է պրոլետարական տուրիզմի, Ելբրուսի և
Բաքսանայի մարշրուտների բազան:

ՍՈՃԻՆՏԵՐԻ ՅԵՎ ԺԱՅՈՒՆԵՐԻ ՄԵՋ

Սեպտեմբերի 13-ին մենք արդեն Տեղենեկլիումն
էյինք: Բաքսանա դետի աջ ափին ընկած են մի քա-
նի նորակառույց շենքեր: Սա Տեղենեկլի առւն է,
Բալկարական մի փոքրիկ գյուղ՝ 1780 մետր բարձ-

բուժյամբ: Գետի ձախ ափին սոճիների անտառի մեջ տեղավորված են մի քանի վրաններ և յերկու փայտյա շենք: Սա տուրիստ—ալպինիստների վերջին կետն է, այստեղից և սկսվում վտար ճանապարհը դեպի Ելբրուս: Այստեղ են ապրում Սայիդ Խաջիևը և Ումար




Տեղեկելի տուրիստական բազան

Բիկոյևը, Նրանք, վորոնք բազմաթիվ ոտարերկրյա և խորհրդային տուրիստների առաջնորդել են դեպի Ելբրուսի գագաթը, իսկ այս տարի 600-ից ավելի Կարարդինո—Բալկարական կոլտնտեսականները՝ առաջնորդեցին դեպի Ելբրուս: Գեղեցիկ է յերեկոն Տեղեկելի ճամբարում: Շամբարի մեջտեղում ամեն

դիշեր վառվում և տուրիստական խարույկը, իսկ Նրա շուրջը հատուկ կառուցված կլոր նստարանների վրա նստած զրույց են անում մեր յերկրի բոլոր ծայրամասերից հավաքված պրոլետարական տուրիստները: Նրանք պատմում են այն մարդկանց մասին, վորոնք նահատակվել են Կովկասյան լեռնաշղթայի, Նրա թագուհի Ելբրուսի բարձրունքներում և սառնամանիքներում: Նրանք հիշում են հայտնի ալպինիստ ալպարիացի ՖՈՒԿՍԻՆ, վորը յեկավ Ելբրուս բարձրանալու համար և բոքի ժամանակ մի չնչին դեպքից նահատակվեց, թաղվեց Ելբրուսի ստորոտին: Նրանք պատմում են չափազանց հետաքրքիր ալպինիստ Զիլենյովի տարորինակ մահման մասին: Ասում են, վոր նա յերեք չէր սիրում ընկերներով գնալ լեռները յեվ ահա վերջին անգամ Ելբրուսի արևմտյան գագաթին և գնում... մենակ, հաջորդ ուր Նրան գտնում են գագաթին քնելու պարկի մեջ փայտացած: Նրանք հիշում են Սառա Գեմոգեմովին, վորը նահատակվեց սրտի պայթյունից: Անմոռանալի յե Պասուխովի արշավը, Նրա՝ վորը 1890 թվականին պատասպարվեց դաժան ձյան փոթորիկից, լավալին քարաժայռերի մեջ: Վորն այժմ կոչվում է իր անունով «Պասուխովի որևիան»:

Խարույկի շուրջն սկսվում է յերգն ու պարը, ուրախ տուրիստական յերեկոն: Կառուցվելի մեքենավար ԳԱՌՆԻԿԻՎ դառնում է բոլորի ուշադրության առարկան, նա ամեն յերեկո արտասանում է և յերդում «Պեպոն», համախմբում բոլորին իր շուրջը, կազ-



Բաքտանայի ափով դեպի Կրուզադոր

մակերպում կուրսուրա-կան հանգիստը: Կարարդինյին, բալկարացին, ռուսը, ափսուրիական շուցբունդականները, վրացիները, հրեաները-- բոլորն ինչպես մի բնատանիք, հասկանում են իրար, ուրախանում և ծափահարում են ամեն անգամ, չերը հանդես ե գալիս մեքենավար Գառնիկը: Այստեղ, այս խարուկի շուրջն իրենց հերոսական պայքարի մասին են պատմում ափսուրիական շուցբունդականները՝ Ֆրանցը, Գուսալը, Զաուբեբերը և մյուսները, իսկ առավոտյան մազլցում են քարաժայռերի ծերպերն ի վեր կատվի նման ճարպկորեն՝ և ցույց են տալիս հաղարավոր տուրխտաների

չեղ ալպինիստների, թե ինչպես պետք հաղթահարել քարաժայռերը և սովորեցնում են ժայռեր մազլցելու տեխնիկան:

Հաջորդ որն առավոտյան, մեզ հետ եր վերա Շչոլոկը, այդ լեռնային արծիվը, վորը ցույց եր տալիս հերոսութան անձնական որինակ ժայռեր բարձրանալիս: Նա առհավետ անջնջելի կմնա մեր հիշողության մեջ: Նա առաջինն եր մազլցում սեպածե ժայռերը՝ պարանն ամուր կապած մեջքին և ուսին և ապա մեզ կովկասցիներին մեկիկ--մեկիկ բարձրացնում քարաժայռերով: Այդ լեռնագրագի բանվորուհին իր գուսպ և մտածված շարժումներով ժայռերի ծերպերին, մեր մեջ ստեղծում եր առաջ գնալու, դժվարութունը հաղթահարելու կամք:

Շուցբունդական Գուսալը մեծ սառնասրտությամբ պարանով իջնում ե ժայռից ցած և ցույց տալիս ժայռից իջնելու Դյուֆլերի տեխնիկան:

ԴԵՊԻ ԿՐՈՒԳԱՋՈՐ


Սեպտեմբերի 15-ի առավոտյան, չերը արևի առաջին ճառագայթները շոյում ելին սոճիների դազաթները, վերա Շչոլոկը պատրաստ կանգնած եր առաջնորդելու մեզ դեպի Ելբրուսի Կրուզադոր: Ժամը 10-ին մեր խումբն անցնելով փոքրիկ փայտյա կամուրջը, խճուղով ուղևորվեց դեպի Կրուզադոր: Գեղեցիկ ե Յուսեմգի կիրճը: Այստեղից անցնում ե դեպի Բեշո տանող լեռնանցքի ուղին, ճանապարհը դեպի «Ռոս Ֆրոնտ» ճամբարը և Կոյ Սուրուլգեն արվարձանը:

Յերեացող նոր շենքերը վկայում են նոր Բալկարի յեռուն շինարարության մասին: Այլ կողմում ընկնում է Տեգենեկլի—Բաշի, Սառի Կոլ—Բաշի, իսկ ձախում՝ Կոկուսայ—Բաշի լեռները: Այստեղ՝ Իսկոլ գյուղի մոտ մի փոքրիկ արահետ տանում է դեպի Դոնդուզ—Որուն լեռնանցքը: Ճանապարհը մինչև Տերսկոլա գյուղն անցնում է սոճիների անտառի միջով: Ժամը 2-ին մենք արդեն Տերսկոլա փոքրիկ առուի մոտ ելինք: Այստեղից սկսվում է վերելքը դեպի Ելբրուսի Կրուգագոր: Սա առաջին ոթևանն է Ելբրուսի ձյունապատ լանջին: Այստեղ սկսվում է Տերսկոլա սառցադաշտը, Վորը գեղեցիկ սառցակույտով իջնում է դեպի Ագաու հովիտը: Արեն սկսում է արագ իջնել դեպի Դոնդուզ—Որուն: Նրա ձյունապատ սառցադաշտերը փայլիլին են տալիս արեգակի վերջին հազարավոր ճառագայթների տակ: Շառագունվեի են նաև հարևան լեռնագագաթները:

Սկսվեց առաջին վերելքը:

Յերեկոյան միջին հասանք Կրուգագոր: Այստեղ են նաև Կարմիր բանակի Կապի Ակադեմիայի ուսանողները: Նրանք մեզ դիմավորեցին վողջուհներով և Ելբրուսի ձյունապատ լանջին, շրջապատված սառցադաշտերով և հավերժական ձյունով՝ սկսվեց խանդավառության միտինգը:

—Ընկեր ուսանողներ, լեկոդ տալի, ոգոստոսի 17-ին յեկեք մեզ մոտ, մասնակցելու մեր ալպինիզմին,—հրավիրեցինք մենք Կապի Ակադեմիայի ուսանողներին:



Դոնդուզ—Որուն սարը

Գեղեցիկ է Կրուգագոր: Այստեղից բացվում է մի հոյակապ պանորամ դեպի Կովկասյան լեռնաշղթան, նրա գագաթները, դեպի անպարտելի Ուժբան, Դոնդուզ—Որուն, Դիխաուն, Տեգենեկլի—Բաշին և մյուսները: Ջախ կողմում բացվում են Մեծ Ագաու, իսկ աջում՝ Փոքր Ագաու սառցադաշտերը, կտրտված սառցակույտերով, Վորոնց վրայով՝ ճանապարհը տանում է դեպի 11-ի ոթևանը և գագաթները: Դիմացը յերևում են Ելբրուսի յերկու գագաթները, այնքան մոտ և այնքան կարոտալի:

Սեպտեմբերի 16-ին մենք պատրաստվում էինք դեպի 11-ի ռեբվանը: Վերցնելով մեզ հետ յերկաթյա ճանկեր, սառցահատներ, ալպենշտոկներ, ակնոցներ և այլ անհրաժեշտ իրեր, կազմով 21 հոգի (մեկը հիվանդացել և մնացել էր Նալչիկում) մենք դուրս յեկանք Կուզագորից: Դանդաղ, հաշվի առնելով յուրաքանչյուր քայլը, խումբը շարժվում է Փոքր Ագաու սառցադաշտով: Այստեղ չպետք է շտապել: Այստեղ պետք է լավ հիշել բարձր լեռնային տուրիզմի հիմնական կանոնը, վոչ միայն հասնել այլև պահպանել ուժերը, չխանգարելով սըրտի գործունեությունը: Այստեղ սրտի համար ավելի շատ աշխատանք կա. քան վոտների համար: Մենք քայլում եյինք մորենների վրայով դեպի վեր: Վերելքն աստիճանաբար դժվարանում է: Մեր առջև անվերջ հանդիպում ենք սառցադաշտերի, վտանգավոր ճեղքվածքների, ձյան, վորը շատ էր դժվարացնում վերելքը: Վերջին շրջադարձը յեվ յերեկոյան ժամը 5-ին խումբը հասավ 11-ի ռեկանը: Սա քարե կիսաողակ է կենտրոնում փորվածքով: Այստեղ ապաստարան են գտել քարաժայռերի մեջ 11 տուրիստներ փոթորկի և բուքի ժամանակ: Մեզ դիմավորեցին Դոմբասի բանվորները: Նրանք մեր գալու մասին իմացել էյին

1 ՄՈՐԵՆԱ.—քարակարկառ, սառցադաշտային շրջանից:

2 ՖԻՐՆԱ.—սըսռաձյուն, բլուրեղաձյուն:

դեռ ճանապարհին և մեզ համար պատրաստել էյին ընթրիք և յերեկոյան թեյ: Ինչպիսի հոգատարություն, ինչպիսի ուշադրություն, լեռների և սառցադաշտերի մեջ, Դոմբասի պրոլետարների կողմից դեպի Հայաստանի մի խումբ բանվորներն ու կոլտնտեսականները:

Ընկերները բաժանվեցին ըստ վրանների: Քնել սառույցների վրա, հատուկ պարկերի մեջ, գիշերալին քամիների տակ, Ելբրուսի լանջին, յերբ զգում ես, վոր ահա քամին կտանի վրանը յեվ դու կմնաս քնելու պարկի մեջ, բնության քմահաճույքին. յենթապա՛ այս խոր զգացմունքը յեվ ահռելի չէ, և անմոռանալի: Յերկու գիշեր քնեցինք սառույցների վրա: Սեպտեմբերի 18-ի յերեկոյան մենք պատրաստվում էյինք գիշերը դուրս գալու դեպի Ելբրուսի գագաթը: Սառա Գաբաշովը մեզ պետք է առաջնորդեր դեպի ձյունապատ գագաթները:

ԳՐԱՅՈՒՄ ԵՆՔ ԵԼԲՐՈՒՍԸ

Նոր էյինք փակել աչքերս, յերբ մեքենավար ԳԱՌՆԻԿԸ զարթեցրեց ինձ: Գիշերվա ժամը 12-ին մոտ էր: Մի քանի ըոպելում բոլոր ընկերները հագնվեցին և պատրաստ էյինք շարժվելու դեպի գագաթը: 18 ժամ մենք պետք է քայլենք սառցաժայռերի, ֆիրնի և սառույցի վրայով, մենք պետք է մեզ վրա կրենք լեռնային հիվանդությունը, ողի նոսրությունը: Ստուգեցինք բոլոր ընկերների հագուստը և անհրաժեշտ պարագաները: Յերբ մենք համոզվեցինք,

վոր բոլորը տաք են հագնված և պատրաստ են շարժվելու, գիշերաչին խավարի մեջ հնչեց վերջին հրահանգը:

—Դեպի արևմտյան գագաթը—մ ամ ամ ր շ:


—Յեվ ամբողջ խումբը լուռ, դանդաղ քայլերով շարժվեց դեպի Պասուխովի ոթեանը: 10 բուլե Պասուխովի ոթեանում հանգուտանալուց հետո մենք շարժվեցինք դեպի Թամբոցը:¹⁾ Ոգի նոսրությունը սեղմում էր մեր կոկորդը: Սկսվեց գլխացավը, իսկ վոմանց ել սիրտն է սկսում խառնել: Զգում ենք լեռնային ոգի սառնությունը: Առավոտյան ժամը 10-ին մեր խումբը հասավ Թամբոցը, վորը գտնվում է 5320 մետր բարձրության վրա:

Լեռնային հիվանդությունը զգացնել տվեց: Սկզբվեց արյունահոսությունը քթից, բերանից և ուժեղ գլխացավ: Նա, ով ուղում էր վազելով հասնել գագաթ, ստիպված պետք է վերադառնար Թամբոցից: Մենք ստիպված յեղանք այստեղից վերադարձնել 4 հոգու: Մեր շարքերը կամաց-կամաց նոսրանում էին:

5450 մետր բարձրությունից վերադարձան ևս հինգ հոգի: Մինչև արևմտյան գագաթը մնացինք 8 հոգի: Փորձված ալպինիստ ՍԱՇԱ Գաբբաշովը մեզ ուղեկցում էր դանդաղ, համաչափ քայլերով: Թամբոցից 150 մետր բարձր սկսում է մեծ թեքության վերելքը: Այստեղ անհրաժեշտ յեղավ գործադրել

¹⁾ Թամբոց—յերկու գագաթների միջև ընկած տարածությունը:

սառցահատները, ամուր հենվել ալպենշտոկների վրա և կապվել պարանով: Սառույցի աստիճաններ փորելով առջևից գնում էր Դաբբաշովը, իսկ նրա յետևից լուռ քայլում էինք մենք թագցնելով մեր մեջ այն խոր ցանկությունը, վոր անհմի քանի բուլե հետովերջապես կ'լինենք գագաթին: Իսկ գագաթը հեռու



Ուժբան սրածայր գագաթներով

յե: Նորից մի շրջադարձ և անցնելով յերկու ձյունապատ բլուրների մեջ ընկած դաշտի վրայով, մի քանի քայլ առաջ յերևաց Կովկասյան հսկա ելբրուսի սրածայր գագաթը: Վոտներն այլևս չեն շարժվում, պետք է առաջ գնալ կամքի ուժով: Մի քանի բուլե հետո մենք կ'լինենք գագաթին՝ 5633 մետր բարձրության վրա: Կառնչուկչինի մեքենավար Գառնիկը, Հոկտեմբեր-

չան կոտնտեսական Մովսեսն ու հին ալպինիստ Ասատուրն առաջինն են բարձրանում գագաթը և գլը-
կախառնվելուր Կլիմ Վորոբիլովի կիսանդրիին յերգում
են պրոլետարիատի հիմնը—ինտերնացիոնալը:

Յեղանակը պարզ է, արևալին: Յերեկվա ժամը
12-ին, արշավի մասնակիցներին 8 հոգի Նլբրուսի
գագաթին ենք: Այստեղից բացվում է մի հոյակապ
տեսարան դեպի Կովկասյան լեռնաշղթան, դեպի
Ուժբան իր յերկու սրածայր գագաթներով, իսկ նրա
կողքին Չաթին—Տաուն, ահեղ և դաժան Կաեսան—Տաու
լեռները և հսկա Դիխ—Տաուն:

Հազարավոր լեռնագագաթները բազմաթիվ ձևե-
րով ձգվում են դեպի արևելք և այդ բոլորը փաշ-
լում են արևի պայծառ ճառագայթների տակ: Հեռվում
հազարավոր լեռների մեջ, յերևում է Կազբեկը, ապա
Սեվ ծովը, հեռու մշուշի մեջ կորած Արարատը և այլ
բազմաթիվ լեռներ:

ՎԵՐՁԻՆ ՅԵՎ ԱՆՄԱՌԱՆԱԼԻ ՈՒՂԻՆ

Սկսում ե ցրտել: Նլբրուսին հատուկ բարակ և
սառը քամին մտնում է մարդու մարմնի մեջ: Վեր-
ջին անգամ մի հալացք ձգելով դեպի հոյակապ, ան-
մոռանալի Կենտրոնական Կովկասի լեռները, մենք
իջնում ենք ցած: Վայրելքը մի քանի անգամ ավելի
դժվար է: Մենք ամուր հենվում ենք սառցահատնե-
րի և ալպենշտոկների վրա, յերկաթյա ճանկերը
մեխելով սառույցների մեջ, իսկ յերբեմն ել սա-

հելով սառույցի վրայով իջնում ենք դեպի թամ-
քոցը: Արևը կամաց կամաց թափնվում է Նլբրու-
սի թիկունքում, ողն ալիլի սառն է դառնում, իսկ
վոտները հրաժարվում են յենթարկվելուց, զգում ենք
վայրելքի դժվարությունը:

18 ժամ սառույցների և ձյունների վրայով քայ-
լելը, ողի նոսրությունն արդեն վերջնականապես
սկսում է հաղթահարել. մեզ: Պասուխովի ոթևանի
մոտ վերջին հանգիստն է: Մենք վերադառնում ենք
Կրուգազոր, վորտեղից վերջին ուղին տանելու յե մեզ
Նալչիկ և ապա դեպի Անդրկովկասի սիրտ—Թիֆ-
լիսը, դեպի մեր արևոտ յերկիրը:

Նլբրուսի մարշրուտը փակվում է, մենք վերջին
խումբն ենք, վոր իջնում ենք Նլբրուսի գագաթից:

Վերջին հրաժեշտ ենք տալիս Նլբրուսի ձյունա-
պատ շլանջերին: Առանց շտապելու, սեպտեմբերի
20-ին մենք իջանք Տեգենեկլի:

Հայաստանի 22 ալպինիստները ցույց տվին
բարձր լեռներ, սառցադաշտեր և քարաժայռեր
հաղթահարելու մեծ ընդունակություն և կամք, վո-
րով և հավերժացրին մեր սքանչելի սոցիալիստական
հայրենիքի՝ Հայաստանի խորհրդայնացման 15 ամ-
յակը:

1935 թ., հոկտեմբերի 10.

ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԴԵՊԻ ԱՐԱԳԱՇԻ ԳԱԳԱԹԸ	8
2. ՀԱՂԻՄԻ ԲԱՐՁՐՈՒՆՔՆԵՐՈՒՄ	13
3. ԴԵՊԻ ՄԱՅՄԵՆԻ ԳԱԳԱԹԸ	18
4. ՀԱՎԵՐԺԱԿԱՆ ՁՅՈՒՆԵՐԻ ՄԵՉ	25

(ԵԼԲՐՈՒՄ)

Հայաստանի Ազգային գրադարան



NL0432157

415

21624

ԳԻՆԸ 1 Ռ. 29 Կ.



В. Дарян

На снежных горах
Гиз ССР Армений, Эривань, 1986